

ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐՆԱԿԱՎՈՐՄԱՆ

ՌԱԴԻՔ ՄԻՐՋՈՅԱՆ, ՀԱԿՈՐ ՄԱՐՈՒՔՅԱՆ

Տնտեսական երևույթները և պրոցեսները բնութագրվում են ցուցանիշների համակարգի միջոցով, որը պետք է համապատասխանի տնտեսության զարգացման յուրաքանչյուր փուլի առանձնահատկություններին ու պահանջներին: Ցուցանիշը տնտեսական օրենքների և կատեգորիաների զրուցման արտաքին ձև լինելով՝ բնութագրում է դրանց քանակական և որակական կողմերը: Հասարակական արտադրության զարգացման ընթացքը պահանջում է անընդհատ կատարելագործել տնտեսական ցուցանիշների համակարգը՝ այն համապատասխանեցնելով նոր տնտեսական երևույթների և պրոցեսների պահանջներին: Անհրաժեշտություն է զգացվում մշակել տնտեսական ցուցանիշների այնպիսի համակարգ, որը խթանի արտադրական միավորումներին և ձեռնարկություններին՝ նվազագույն ծախսումներով թողարկելու հասարակությանն անհրաժեշտ բարձրորակ արտադրանք:

Արտադրական միավորումների և ձեռնարկությունների տնտեսական գործունեության գնահատման հիմքում ընկած են արտադրանքի ծավալային-արժեքային ցուցանիշները: Արտադրանքի ծավալային ցուցանիշները կազմում են այն առանցքը, որի շուրջը ձևավորվում են արդյունաբերական միջոցառումները, միավորման ու ձեռնարկության տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման և խթանման մյուս ցուցանիշների համակարգերը: Արտադրանքի ծավալի, տեսականու և որակի հետ ուղղակի կամ անուղղակի կապված են արտադրական միավորումների և ձեռնարկությունների տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման և խթանման ցուցանիշները: Առանց դրանց անհնար է որոշել, գնահատել միջոցառումների, միավորումների, ձեռնարկությունների արտադրատնտեսական գործունեության արդյունքները: Տնտեսական գործունեության գնահատման ժամանակ օգտագործվող արտադրանքի ծավալային-արժեքային ցուցանիշների ճիշտ ընտրությունից է հիմնականում կախված կոնկրետի, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատողի շահագրգռվածությունը՝ այս կամ այն արտադրանքի արտադրության ավելացման, ժողովրդական տնտեսության և բնակչության պահանջմունքների բավարարման գործում:

1965 թ. տնտեսական բարեփոխությամբ արտադրական միավորումների և ձեռնարկությունների տնտեսական գործունեության պլանավորման և գնահատման համար ծավալային ցուցանիշներից սուռաք քաշվեց իրացված արտադրանքը: Այն փոխարինեց համախառն արտադրանքի ցուցանիշին, որը ձեռնարկություններին չէր կողմնորոշում այնպիսի արտադրատեսակների թողարկմանը, որոնք անհրաժեշտ են ժողովրդական տնտեսությանը և բնակչու-

թյանը, իսկ հաճախ էլ կասեցնում էր՝ արտադրանքի տեսականու և որակի բարելավումը: Իրացված արտադրանքի ցուցանիշի օգտագործումը ժամանակին առաջադիմական բայլ էր և որոշակիորեն նույաստեց ժողովրդական տրնտեսության դարգացմանը: Միաժամանակ իրացված արտադրանքի ցուցանիշն ուներ որոշ թերություններ: Ինչպես համախառն (ապրանքային), այնպես էլ իրացված արտադրանքի ծավալը կախված է թողարկվող արտադրանքի անվանացանկի և տեսականու փոփոխությունից, այսինքն՝ նյութատարությունից և շահութաբերությունից, հումքի և նյութերի գների, կոոպերացված մատակարարումների ծավալի, արտադրության կառուցվածքային և կազմակերպչական տեղաշարժերի փոփոխություններից: Այս ցուցանիշը համախառն արտադրանքից ժառանգեց նրա հիմնական արատներից մեկը՝ որքան թանկ է նստում արտադրանքի թողարկումը՝ ձեռնարկության վրա, այնքան բարվոք են տնտեսական գործունեության արդյունքները և ընդհակառակը:

Տնտեսական գործունեությունն իրացված արտադրանքի ցուցանիշով գնահատելիս ձեռնարկությունները ձգտում են թողարկել նյութատար արտադրատեսակներ, քանի որ այդ ցուցանիշի միջոցով արտահայտված արտադրանքի արժեքը ոչ միայն տվյալ ձեռնարկությունում ծախսված աշխատանքի արդյունքն է, այլև վերարտադրության պրոցեսի նախորդ փուլերում ձեռք բերվածը: Ուստի չի կարելի շնկատել, որ իրացված արտադրանքի առաջադրանքներ սահմանելով խթանվում է ոչ միայն նոր, այլև փոխանցվող արժեքի ավելացումը: Ձեռնարկություններին շահավետ է թողարկել այնպիսի արտադրանք, որի գնի մեջ բարձր տեսակարար կշիռ ունեն թանկարժեք նյութերը, հումքը, զնովի կիսաֆաբրիկատները, հանդույցները և այլն: Իրացված արտադրանքի ցուցանիշն արգելափակում էր միավորումների ստեղծման պրոցեսը, քանի որ ինքնուրույն ձեռնարկությունները միավորելու դեպքում ձյուղային և տարածքային գերատեսչությունների իրացվող արտադրանքի ծավալը կրճատվում էր ներմիավորման շրջանառության գումարի չափով:

10-րդ հնգամյակում տնտեսավարման մեխանիզմի կատարելագործման հիմնական ուղղությունները որոշվել էին ՍՄԿԿ XXV համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների որոշումներով և ՍՍՀՄ սահմանադրության զրույթներով: ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1979 թ. հուլիսի 12-ի «Պլանավորումը բարելավելու և արտադրության արդյունավետության ու աշխատանքի որակի բարձրացման վրա տնտեսական մեխանիզմի ներգործությունն ուժեղացնելու մասին» որոշումով նախատեսվեցին մի շարք միջոցառումներ՝ ժողովրդական տնտեսության պլանավորման հետագա կատարելագործման, արտադրության կառավարման գործում դեմոկրատական եկզբունքների զարգացման, հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման, արտադրանքի որակի բարելավման, աշխատողների նյութական խթանման ուժեղացման ուղղությամբ: Որոշման մեջ մասնավորապես նշվում է, որ գոյություն ունեցող պլանային ցուցանիշներն ու չափանիշները հնացել են և որոշակի հակասության մեջ են գտնվում արտադրության արդյունավետության բարձրացման խնդրի հետ: Հաստատվող պլանային ցուցանիշների մեծ մասը կապված չէ մինիստրությունների, միավորումների ու ձեռնարկությունների տնտեսական գործունեության վերջնական արդյունքների հետ և շատ հաճախ խոչընդոտում է արտադրության արդյունա-

վետությունն ու աշխատանքի որակի բարձրացմանը, արտադրության ընդհանուր ծավալի ավելացմանն ու աշխատանքի արտադրողականության աճին: Թողարկվող արդյունաբերական արտադրանքի ծավալը չի բնութագրում հասարակական պահանջարկների բավարարման աստիճանը: Այդ ցուցանիշներին հիման վրա հաշվարկված աճի տեմպերը ճիշտ պատկերացում չեն տալիս տնտեսության զարգացման վերաբերյալ: Մավալային ցուցանիշների աճի բարձր տեմպերը արտացոլում են ոչ միայն արտադրանքի ֆիզիկական ծավալի ավելացումը, այլև նրա նյութատարության բարձրացումը: Ստացվում է այնպես, որ աճի տեմպերը հակադարձ կախվածության մեջ են գտնվում նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործումից:

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1979 թ. հուլիսի 12-ի հիշյալ որոշմամբ սահմանվեց հնգամյա պլաններում արդյունաբերական մինիստրությունների, միավորումների ու ձեռնարկությունների համար հաստատվող (բաշխելով ըստ տարիների) ցուցանիշների և տնտեսական նորմատիվների նոր կարգ: Դրանով ցուցանիշների համակարգը հիմնականում նպատակամղվեց վերջնական ժողովրդատնտեսական արդյունքների ապահովմանը, այսինքն՝ հասարակական և անձնական պահանջարկների ավելի լրիվ բավարարմանը, արտադրության արդյունավետության և աշխատանքի որակի բարձրացմանը: Որոշման մեջ հատուկ ուշադրություն է դարձվում մինիստրությունների, միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության արդյունքների գնահատման չափանիշների բնորոշյալը: Արտադրանքի ծավալային, համախառն արժեքային ցուցանիշներից առաջնությունը տրվում է զուտ արտադրանքին (նորմատիվային), որպես արդյունաբերական մինիստրությունների, միավորումների և ձեռնարկությունների տնտեսական գործունեության գնահատման հիմնական ցուցանիշի: Նախատեսվում է զուտ արտադրանքի ցուցանիշին անցնելն իրականացնել համապատասխան ձևերով անհրաժեշտ պայմաններ ստեղծելուց հետո:

Պլանավորման և տնտեսական խթանման համակարգի կատարելագործումը պետք է ուղղվի այն բանին, որպեսզի բոլոր կոլեկտիվների համար ստեղծվեն տնտեսավարման հավասար պայմաններ, այսինքն՝ յուրաքանչյուր կոլեկտիվի տնտեսական գործունեությունը գնահատվի և խրախուսվի կատարած աշխատանքի իրական արդյունքներին համապատասխան: Յուրաքանչյուր արտադրանքի արժեքի մեջ անհրաժեշտ է միմյանցից տարբերել նրա արտադրության պրոցեսում օգտագործված և արժեքի մեջ փոխանցված արտադրության միջոցների արժեքը և նոր ստեղծված արժեքը: Այդ առիթով Կ. Մարքսը գրել է. «աշխատանքի առարկային նոր արժեք միացնելն ու արդյունքի մեջ հին արժեքները պահպանելը երկու բոլորովին տարբեր հետևանքներ են, որոնց բանավորը հասնում է միևնույն ժամանակում... Հետևաբար, յուրաքանչյուր տեղամասի, արտադրության կամ ժողովրդատնտեսական օղակի արտադրատնտեսական գործունեության ծավալը պետք է որոշվի միայն արտադրանքի արժեքի այն մասի միջոցով, որը ստեղծվել է այդ գործունեության պրոցեսում, այսինքն՝ նոր ստեղծված արժեքով: Ինչպես համախառն (ապրանքային), այնպես էլ իրացված արտադրանքի ծավալն ու դինամիկան արտացոլում են ոչ միայն տվյալ ձեռնարկության, այլև նրա մա-

տակարարների տնտեսական գործունեության արդյունքները՝ ինչ անհրաժեշտ է որոշել կոնկրետ տվյալ ձեռնարկության ներդրումը, ապա նրա արտադրանքի ընդհանուր արժեքից պետք է հանվի այն մասը, որն արտացոլում է այլ ձեռնարկությունների աշխատանքը։ Ինչս ղեկավարում ձեռնարկությունում մնում է նոր ստեղծված արժեքը, այսինքն՝ զուտ արտադրանքը, որը մեր կարծիքով առավել օբյեկտիվ է, քանի որ վերացնում է առարկայացված ծախսումների ազդեցությունը։

4. Մարքսը գտնում էր, որ զուտ արտադրանքը համախառն արդյունքի այն մասն է, որը «մնում է ամբողջ արտադրության մեջ արժեքի մի մասը (և արդյունքի նրանով չափվող մասը) հանելուց հետո, այն մասը, որը փոխհատուցում է արտադրության մեջ ներդրված և նրանում սպառված հաստատուն կապիտալը»⁴։ Այսպիսով զուտ արտադրանքն արտադրական գործունեության ընթացքում ստեղծված նոր արդյունքն է և բնութագրում է արտադրական կոնկրետի սեփական աշխատանքային ծախսումները։ Զուտ արտադրանքը կարելի է որոշել երկու եղանակով՝ մի դեպքում համախառն արտադրանքից հանելով արտադրության պրոցեսում օգտագործված բոլոր տեսակի նյութերի, հումքի, վառելիքի, էներգիայի, կիսաֆաբրիկատների արժեքը և հիմնական ֆոնդերի ամորտիզացիան, մյուս դեպքում՝ հանրագումարի բերելով աշխատավարձը, սոցիալական հատկացումները, շահույթը, արտաարտադրական» և «այլ ծախսումներում» պարունակվող զուտ արտադրանքի տարրերը։

Գոյություն ունեն զուտ արտադրանքի տարատեսակներ՝ պայմանական զուտ արտադրանք, հաշվարկային զուտ արտադրանք և նորմատիվային զուտ արտադրանք։ Պայմանական զուտ արտադրանքը բացի վերը թվարկված տարրերից ներառում է նաև հիմնական ֆոնդերի ամորտիզացիան։

Հաշվարկային զուտ արտադրանքը ստացվում է զուտ արտադրանքից հանելով նաև ֆոնդավճարը, բանկի վարկի տոկոսները, ռենտային, հաստատագրված վճարումները, պայմանագրային պարտավորությունների թերացման համար վճարված տույժ, տուգանք և տուժանքները (ստացված տույժ, տուգանք և տուժանքները մտցվում են հաշվարկային զուտ արտադրանքի մեջ)։

Նորմատիվային զուտ արտադրանքի ծավալը որոշվում է կայուն նորմատիվներով (զուտ արտադրանքի գներ), որոնք սահմանվում են հնգամյակի կտրվածքով։ Զուտ արտադրանքի նորմատիվը արտադրանքի մեծածախ գնի մի մասն է, որը մնում է արտադրության վրա կատարված նյութական ծախսումները (արտադրության մեջ օգտագործված հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի, գնովի կիսաֆաբրիկատների ու իրերի արժեքի գումարը, ինչպես նաև ամորտիզացիոն հատկացումները) հանելուց հետո։ Զուտ արտադրանքի նորմատիվները սահմանվում են թողարկվող արտադրանքի ամբողջ անվանացանկի համար։ Յուրաքանչյուր արտադրատեսակի համար սահմանված զուտ արտադրանքի նորմատիվը բազմապատկելով թողարկված արտադրատեսակների քանակով, ստանում են ձեռնարկությունում փաստորեն թողարկված զուտ արտադրանքի ընդհանուր ծավալը։

⁴ 4. Մարքս, Կապիտալ, հ. 3, երկրորդ մաս, Նրևան, 1949, էջ 381.

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վերահիշյալ որոշման մեջ նախատեսվում է արտադրանքի նոր մեծածախ գներ մշակելիս դրանց մեջ հատուկ առանձնացնել զուտ արտադրանքի նորմատիվը: Այսպիսով, նորմատիվային զուտ արտադրանքը բնութագրում է նորմատիվի մշակման ժամանակ նոր ստեղծված արժեքի բաժինը՝ արտադրանքի մեծածախ գնի մեջ:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հանրապետության մի շարք արտադրական միավորումների ու ձեռնարկությունների տնտեսական գործունեությունը զուտ արտադրանքի ցուցանիշով գնահատելու ուսումնասիրությունները, որոնք կատարվել են ՀՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնտեսական հաշվարկի և նյութական խթանման բաժնում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ զուտ արտադրանքի ցուցանիշը մի շարք հարցերում որոշակի առավելություններ ունի համախառն, ապրանքային և իրացված արտադրանքի ցուցանիշների նկատմամբ: Զուտ արտադրանքի ցուցանիշը ճիշտ է բնութագրում նոր ստեղծված արժեքի մեծությունն ու ձեռնարկության ներդրումը ազգային եկամտի ստեղծման գործում:

Ի տարբերություն համախառն, ապրանքային և իրացված արտադրանքի ցուցանիշների, զուտ արտադրանքը չի ներառում նյութական ծախսումների կրկնահաշվարկը, հետևապես և բացառում է արտադրանքի ծավալի արհեստականորեն ավելացման նպատակով մյուս ձեռնարկությունների աշխատանքի օգտագործումը: Այս ցուցանիշի մեծությունը կախված չէ ճյուղում կատարվող կառուցվածքային և կառավարչական փոփոխություններից, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում միավորումների կազմավորման համար: Զուտ արտադրանքի ցուցանիշն առավել ճիշտ պատկերացում է տալիս արտադրական միավորումների ու ձեռնարկությունների տնտեսական գործունեության իրական արդյունքների մասին: Այսպես, «Հայէլեկտրաապարատ» արտադրական միավորման համախառն արտադրանքի ծավալը 1975—1978 թթ. աճել է 43,1, իրացված արտադրանքինը՝ 34,7, իսկ զուտ արտադրանքինը՝ 22,2% -ով, մինչդեռ գնովի կիսամթարրիկատների ու իրերի արժեքը (որը ցույց է տալիս այլ ձեռնարկությունների մասնակցության չափը արժեքի գոյացման մեջ) աճել է ավելի քան 2,2 անգամ³: Ընդ որում, այդ նույն ժամանակաշրջանում համախառն արտադրանքով հաշվարկված աշխատանքի արտադրողականությունն աճել է 21,6, իսկ զուտ արտադրանքով հաշվարկվածը՝ ընդամենը 7,4% -ով: Մեր կարծիքով զուտ արտադրանքի հիման վրա հաշվարկված աշխատանքի արտադրողականության ցուցանիշը ավելի ճիշտ է բնութագրում աշխատանքի արտադրողականության մակարդակի փոփոխությունը: Բավական է նշել, որ միայն կոոպերացված մատակարարումների ծավալի տեսակարար կշռի բարձրացման հաշվին համախառն արտադրանքով հաշվարկված աշխատանքի արտադրողականությունն աճել է 17,3% -ով, որը ձեռք է բերվել ոչ թի կոլեկտիվի ջանքերով, այլ ուրիշ ձեռնարկությունների աշխատանքով: Նկատենք, որ չի կարելի աշխատանքը ավելի կամ սլակաս արտադրողական համարել միայն այն պատճառով, որ արտադրանքը պատրաստվել է համեմատաբար թանկ կամ էժան հումքից, նյութերից և կոմպլեկտավորվող արտադրանքից: Այստեղից միաժամանակ

³ Այս և հետագա հաշվարկները կատարված են մեր կողմից՝ համապատասխան արտադրական միավորումների և ձեռնարկությունների տարեկան հաշվետվությունների հիման վրա: Լրաթիւ 1—2

հետևում է, որ զուտ արտադրանքի ցուցանիշն օգտագործելու դեպքում արտադրական միավորումները և ձեռնարկություններն այլևս չեն ձգտի արտադրանքի ծավալային, արժեքային ցուցանիշների և աշխատանքի արտադրողականության աճն ապահովել ի հաշիվ նյութատարության և կոտպերացված մատակարարումների ծավալի ավելացման, քանի որ վերջինս չի արտացոլվում զուտ արտադրանքի ծավալում: Այդ են վկայում կիրովականի ավտոգենային մեքենաշինության և Երևանի «Ալմաստ» գործարաններում արտադրության պլանավորման և տնտեսական գործունեության գնահատման համար զուտ արտադրանքի ցուցանիշի կիրառման փորձի արդյունքները: Կիրովականի ավտոգենային մեքենաշինության գործարանում 1973—1975 թթ. ընթացքում արտադրատնտեսական գործունեության պլանավորման և գնահատման նպատակով կիրառվեց նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշը, իսկ Երևանի «Ալմաստ» գործարանում 1977 թ. սկսած օգտագործվում է պայմանական զուտ արտադրանքի ցուցանիշը: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված գործարաններում ապրանքային արտադրանքի ինքնարժեքում իջել է գնովի կիսաֆաբրիկատների ու իրերի տեսակարար կշիռը: Այսպես, 1975 թ. կիրովականի «Ավտոգենմեքենա» գործարանում գնովի կիսաֆաբրիկատների և իրերի տեսակարար կշիռը 1973 թ. համեմատությամբ իջել է 1,6, իսկ 1978 թ. Երևանի «Ալմաստ» գործարանում 1977 թ. համեմատությամբ այն կրճատվել է 0,7%-ով: Դրան հակառակ, «Հայէլեկտրապարտ» և «Հայէլեկտրալույս» արտադրական միավորումներում, որտեղ արտադրատնտեսական գործունեությունը պլանավորվում և գնահատվում է իրացված արտադրանքի ծավալով, 1975—1978 թթ. ընթացքում գնովի կիսաֆաբրիկատների ու իրերի տեսակարար կշիռը ապրանքային արտադրանքի ինքնարժեքում բարձրացել է համապատասխանաբար 15,6 և 3,7%-ով: Հարկ է նշել, որ տեսակարար կշռի այս տեմպերով բարձրացումը չի բացատրվում միայն տարբեր ծավալային-արժեքային ցուցանիշների օգտագործմամբ, այն պայմանավորված է նաև մի շարք այլ գործոններով:

Հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայմաններից մեկը կենդանի աշխատանքի տնտեսմանը զուգընթաց հումքի, նյութերի և վառելիքի խնայողաբար օգտագործման ապահովումն է: Ներկայումս առաջնակարգ նշանակություն է ձեռք բերում ոչ միայն կենդանի, այլև առարկայացված աշխատանքի տնտեսումը, քանի որ արտադրանքի ինքնարժեքի մեջ նյութական ծախսումներն արտադրության առանձին ճյուղերում հասնում են 70—90%-ի:

Ի տարբերություն փաստացի զուտ արտադրանքի, նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշը չի արտացոլում նյութական ծախսումների տնտեսումը կամ գերաժախսը: Չնայած դրան, նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշի կիրառման պայմաններում ձեռնարկություններն այլևս չեն ձգտում արտադրանքի ծավալային, արժեքային ցուցանիշների դժով սահմանված պլանային առաջադրանքները կատարել բարձր նյութատարություն պահանջող արտադրատեսակների թողարկման ավելացման հաշիվին: Այսպես, նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշի փորձնական կիրառման ընթացքում «Սոյուզկրիոգենմեքենա» համամիութենական արդյունաբերական միավորման գրեթե բոլոր ձեռնարկություններում արտադրանքի նյութատա-

րությունն իջել է, 1973—1975 թթ. ընթացքում ամբողջությամբ հիշյալ արդյունաբերական միավորման մեկ ուրբու ապրանքային արտադրանքին ընկնող նյութական ծախսումները 46,5 կոպեկից իջել են 45,5-ի՝

կիրովականի ավտոգենային մեքենաշինության գործարանը նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշով արտադրատնտեսական գործունեությունը պլանավորելու և ղեկավարելու պայմաններում ապահովել է արտադրական ծախսերի զգալի կրճատում, Այդ են վկայում № 1 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ № 1

Արտադրության ծախսերի և ուղղակի նյութական ծախսումների փոփոխություններն
«Ավտոգենմեքենա» գործարանում (1972—1975)

Ցուցանիշներ	1972 թ.		1973 թ.		1974 թ.		1975 թ.		1975 թ. նյութական ծախսերի և ուղղակի նյութական ծախսումների փոփոխություններն	
	կոպ.	տո-կոս	կոպ.	տո-կոս	կոպ.	տո-կոս	կոպ.	տո-կոս		
նորմատիվային զուտ արտադրանքի մեկ ուրբուն ընկնող արտադրության ծախսերը	252,0	100	186,1	73,8	156,1	61,9	154,6	61,3	-97,4	-38,7
համախառն արտադրանքի մեկ ուրբուն ընկնող արտադրության ծախսերը	69,2	100	83,4	120,5	71,3	103,0	70,6	102,0	1,4	2,0
նորմատիվային զուտ արտադրանքի մեկ ուրբուն ընկնող ուղղակի նյութական ծախսումները	121,0	100	92,6	76,5	72,7	60,1	72,1	59,6	-48,9	-40,4
համախառն արտադրանքի մեկ ուրբուն ընկնող ուղղակի նյութական ծախսումները	33,2	100	41,5	125,0	33,2	100	32,9	99,1	-0,3	-0,9

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 1975 թ. նորմատիվային զուտ արտադրանքի մեկ ուրբուն ընկնող արտադրության ծախսերը 1972 թ. համեմատությամբ իջել են 97,4 կոպեկով կամ 38,7%-ով, իսկ համախառն արտադրանքով հաշվարկված՝ արտադրության ծախսերը նույն ժամանակաշրջանում ավելացել են 1,4 կոպեկով կամ 2%-ով: Նորմատիվային զուտ արտադրանքի մեկ ուրբուն ընկնող ուղղակի նյութական ծախսումները կրճատվել են 48,9 կոպեկով կամ 40,4%-ով, իսկ համախառն արտադրանքով հաշվարկված՝ 0,3 կոպեկով կամ 0,9%-ով:

Պատկերը պրեժն նույնն է նրանի «Ալմաստ» դործարանում, որտեղ տնտեսական զործունեության պլանավորման և դնահատման հիմնական ցուցանիշ է ծառայում պայմանական զուտ արտադրանքի ծավալը: Լկյսպես, 1978 թ. այնտեղ զուտ, պայմանական զուտ և համախառն արտադրանքի մեկ ուրբլուն ընկնող արտադրության ծախսերը 1977 թ. համեմատությամբ իջել են համապատասխանաբար 8,6, 7,3, 2,3 կուպեկով կամ 6,6, 6,1 և 3,4% -ով: Զուտ և պայմանական զուտ արտադրանքի մեկ ուրբլուն ընկնող ուղղակի նյութական ծախսումներն իջել են 1,7 և 0,8 կուպեկով կամ 2,8 և 1,5% -ով, իսկ համախառն արտադրանքով հաշվարկված աճել են 0,4 կուպեկով կամ 1,6% -ով:

Ինչպես վերը նշեցինք, ի տարբերություն նորմատիվային զուտ արտադրանքի, հաշվարկային եղանակով որոշված փաստացի զուտ արտադրանքի ցուցանիշը (համախառն արտադրանքից հանած նյութական ծախսումների մեծությունը) արտացոլում է նյութական ծախսումների տնտեսումը կամ զերծախսը: Լկյսինքն, փաստացի զուտ արտադրանքի ծավալը կախված է նյութական ծախսումների փոփոխություններից: Լկյդ են վկայում № 2 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ № 2

Նյութատարության ազդեցությունը արտադրանքի ծավալային ցուցանիշների աճի վրա («Անդրկաբել» և «Հայէլեկտրաապարատ» արտադրական միավորումներում)

Ցուցանիշներ	Ձափի միավոր	«Անդրկաբել» արտադրական միավորում			«Հայէլեկտրաապարատ» արտադրական միավորում		
		1977 թ.	1978 թ.	1978 թ. տոկոսով 1977 թ. համեմատ	1977 թ.	1978 թ.	1978 թ. տոկոսով 1977 թ. համեմատ
Համախառն արտադրանք փաստացի զուտ արտադրանք	հազ. ո.	103272	112280	103,7	48102	53845	111,9
նյութական ծախսումների ծավալը	հազ. ո.	14287	15151	106,0	20378	22687	111,3
Համախառն արտադրանքի մեկ ուրբլուն ընկնող նյութական ծախսումները	ոուր.	0,86805	0,86506	99,6	0,57635	0,57866	100,4

Աղյուսակից երևում է, որ «Անդրկաբել» միավորումում, եթե 1977 թ. համախառն արտադրանքի մեկ ուրբլուն ընկնող նյութական ծախսումները մնային նույն մակարդակի վրա, այսինքն՝ 0,86805 ո., ապա 1978 թ. 112280 հազ. ո. համախառն արտադրանք թողարկելու համար միավորումից կպահանջվեին 97464 հազ. ո. նյութական ծախսեր: Մինչդեռ միավորման փաստացի նյութական ծախսումները 1978 թ. կազմել են 97129 հազ. ո., այսինքն՝ նյութական ծախսումները կրճատվել են 335 հազ. ո.-ով, որի հետևանքով զուտ արտադրանքի ծավալն աճել է 2,3%-ով ($335 \times 100 / 14287$), Իրան հակառակ, եթե «Հայէլեկտրաապարատ» արտադրական միավորումում 1977 թ. համախառն արտադրանքի մեկ ուրբլուն ընկնող նյութական ծախսումները մնային նույն մակարդակի վրա, այսինքն՝ 0,57635 ո., ապա

1978 թ. 53845 հազ. ո. համախառն արտադրանք թողարկելու համար միավորումից կպահանջվեն 31034 հազ. ո. նյութական ծախսումներ: 1978 թ. միավորման փաստացի նյութական ծախսումները կազմել են 31158 հազ. ո., այսինքն՝ նյութական ծախսումներն ավելացել են 124 հազ. ո.-ով, որի հետևանքով զուտ արտադրանքի ծավալը կրճատվել է 0,6%-ով ($124 \times 100 / 20378$):

Ախտամանակ, աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ համախառն արտադրանքի ցուցանիշի աճի տեմպը համեմատած զուտ արտադրանքի ցուցանիշի աճի տեմպի հետ, որպես կանոն, բաշձր է այն արտադրական ձեռնարկություններում ու միավորումներում, որտեղ տեղի է ունեցել նյութական ծախսումների ավելացում և ընդհակառակը:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում զուտ արտադրանքի հիման վրա ֆոնդահատույցի ցուցանիշի հաշվարկը: Ֆոնդահատույցի վերլուծությունը, հաշվարկված համախառն արտադրանքի ցուցանիշով, մի շարք դեպքերում ճիշտ պատկերացում չի տալիս հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման մասին: Հանրապետության մի քանի արտադրական միավորումներում և «Ալմաստ» գործարանում ֆոնդահատույցի շարժը բնութագրվում է № 3 աղյուսակի տվյալներով:

Աղյուսակ № 3

Ֆոնդահատույցի շարժը ՀՍՍՀ մի քանի արտադրական միավորումներում և «Ալմաստ» գործարանում՝ 1975—1978 թթ. (տոկոսներով)

Միավորումներ և «Ալմաստ» գործարան	զուտ արտադրանքով				համախառն արտադրանքով			
	1975 թ.	1976 թ.	1977 թ.	1978 թ.	1975 թ.	1976 թ.	1977 թ.	1978 թ.
«Հայէլեկտրամեքենա»	100	131,2	156,2	146,9	100	105,7	106,4	103,2
«Հայէլեկտրալույս»	100	102,3	106,9	110,3	100	104,2	109,9	109,4
«Հայէլեկտրաշարժիչ»	100	112,2	117,1	115,0	100	102,4	102,4	100
«Հայէլեկտրաապարատ»	100	93,5	92,5	96,8	100	102,6	104,6	109,2
«Անդրկարիչ»	—	100	86,0	78,0	—	100	81,0	72,7
«Երևանի հաստոցաշինական արտադրական միավորում»	—	100	90,0	95,0	—	100	91,0	99,0
«Ալմաստ»	—	100	107,4	123,4	—	100	106,3	118,3

Աղյուսակից երևում է, որ տարբեր արժեքային, ծավալային ցուցանիշներով հաշվարկված ֆոնդահատույցի շարժը նշված արտադրական միավորումներում ու ձեռնարկությունում չեն համընկնում: Այսպես, «Հայէլեկտրալույս», «Հայէլեկտրաշարժիչ» արտադրական միավորումներում և «Ալմաստ» գործարանում 1975—1978 թթ. ընթացքում զուտ արտադրանքի հիման վրա հաշվարկված ֆոնդահատույցը գերազանցում է համախառն արտադրանքով հաշվարկված ֆոնդահատույցի աճին, որը պայմանավորված է թողարկվող արտադրանքի նյութատարւթյան իջեցմամբ: «Հայէլեկտրաապարատ» արտադրական միավորումում ընդհակառակը, համախառն արտադրանքով հաշվարկված ֆոնդահատույցը գերազանցում է զուտ արտադրանքով հաշվարկ-

ված ֆոնդահատույցի աճին, որը պայմանավորված է թողարկվող արտադրանքի նյութատարության բարձրացմամբ: Սկնդրկարել» և Նրևանի հաստոցաշինական արտադրական միավորումներում երկու ցուցանիշով էլ հաշվարկված ֆոնդահատույցը իջնում է, պայմանավորված ղուտ և համախառն արտադրանքի ծավալի աճի նկատմամբ արդյունաբերաարտադրական հիմնական ֆոնդերի ավելի արագ աճով: Այդ են վկայում № 4 աղյուսակի տվյալները:

ՍՍՀԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վերահիշյալ որոշմամբ էական փոփոխություններ մտցվեցին աշխատավարձի ֆոնդի պլանավորման և օգտագործման սահմանված կարգում: Համաձայն այդ որոշման, տնտեսական և սոցիալական զարգացման հնգամյա պլաններում այսուհետև արտադրական միավորումների, ձեռնարկությունների համար հիմնականում հաստատվելու են մեկ ռուբլու զուտ արտադրանքին ընկնող աշխատավարձի երկարաժամկետ նորմատիվներ՝ հնգամյակի առանձին տարիների կտրվածքով: Մինչ այդ աշխատավարձի ֆոնդը պլանավորվում էր ելնելով համախառն (սպլանքային) արտադրանքի հիման վրա հաշվարկված աշխատանքի արտադրողականության աճի տեմպերից: Հաշվարկման նման մեթոդն աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի աճի տեմպերի միջև գգալի շեղումներ էր առաջացնում, քանի որ աշխատավարձը նշանակալիորեն ավելանում էր՝ ի հաշիվ գնովի կիսաֆաբրիկատների, իրերի և հանգուցյանների բաժնի աճի: Այս հանգամանքը միավորումներին ու ձեռնարկություններին մղում էր մեծացնելու նյութատար արտադրատեսակների թողարկումը և աշխատանքի արտադրողականության ցուցանիշը կախվածության մեջ էր դնում նյութատարությունից ու անվանացանկային տեղաշարժերից:

Այդ պատճառով էլ ձեռնարկություններում աշխատավարձի անմիջական կապը կատարված աշխատանքի քանակի և որակի հետ թույլ էր: Մեր կարծիքով, աշխատավարձի ֆոնդի պլանավորման ժամանակ ցանկալի արդյունք է տալիս զուտ արտադրանքով հաշվարկված աշխատանքի արտադրողականության ցուցանիշը: Վերջինս անմիջական կապ է ստեղծում ծախսումների և աշխատանքի վարձատրման միջև: Այս դեպքում աշխատավարձի ֆոնդի անհիմն ավելացումը, կապված արտադրանքի արժեքի մեջ հումքի, նյութերի ու կիսաֆաբրիկատների բաժնի մեծացման հետ, բացառվում է:

Հաշվարկները ցույց են տալիս, որ համախառն արտադրանքի համեմատությամբ զուտ արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող աշխատավարձի ծախսումներն իջնում են ավելի արագ: Այդ են վկայում № 5 աղյուսակի տրվյալները:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, «Հայէլեկտրամեքենա», «Հայէլեկտրալույս», «Հայէլեկտրաշարժիչ», «Հայէլեկտրապարատ», «Անդրկարել» արտադրական միավորումներում և Նրևանի «Ալմաստ» գործարանում 1977 թ. համեմատությամբ 1978 թ. զուտ արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող աշխատավարձի ծախսերը համապատասխանաբար իջել են՝ 3,4, 2,5, 1,4, 1,5, 2,3 և 3,5 կոպեկով: Համախառն արտադրանքով հաշվարկված՝ դրանք «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորումում բարձրացել են 0,4 կոպեկով, իսկ մնացածներում համապատասխանաբար իջել են 0,5, 0,6, 0,8, 0,2, 1,3 կոպեկով:

2002 մի քանի արտադրական միավորումներում և «Ալմաստ» գործարանում որոշ ցուցանիշների շարժը (տոկոսներով)

Ցուցանիշներ	«Հայէլեկտրամե- քենա»		«Հայէլեկտրա- լույս»		«Հայէլեկտրա- շարժիչ»		«Հայէլեկտրա- ապարատ»		«Անդրկա- րել»		«Երևանի հաստոցաշինա- կան արտ. միավորում»		«Ալմաստ»	
	1975 թ.	1978 թ.	1975 թ.	1978 թ.	1975 թ.	1978 թ.	1975 թ.	1978 թ.	1976 թ.	1978 թ.	1976 թ.	1978 թ.	1976 թ.	1978 թ.
համախառն արտա- դրանք	100	107,3	100	138,5	100	128,4	100	143,1	100	103,1	100	121,9	100	135,0
զուտ արտադրանք	100	150,9	100	140,0	100	148,2	100	126,5	100	111,5	100	115,9	100	141,3
արդյունաբերաար- տադրական հիմ- նական ֆոնդերի միջին տարեկան արժեքը	100	103,8	100	127,0	100	128,4	100	130,6	100	142,1	100	123,1	100	114,1
նյութական ծախ- սումների բաժի- նը համախառն արտադրանքի մեջ	100	89,2	100	99,3	100	92,5	100	110,5	100	98,9	100	104,7	100	96,9

Չուտ արտադրանքի ցուցանիշը միավորումների ու ձեռնարկությունների համար օբյեկտիվ պայմաններ է տեսնում ճիշտ գնահատելու և խթանելու կոնկրետ վի աշխատանքի արդյունքները՝ ներկայումս զուտ արտադրանքի ցուցանիշի և նյութական խրախուսման ֆոնդի կազմավորման համակարգի միջև կապը դրսևորվում է աշխատանքի արտադրողականության ցուցանիշի միջոցով, քանի որ վերջինս հաշվարկվում է զուտ արտադրանքի հիման վրա և հանդիս է գալիս որպես առաջին ֆոնդակազմավորող ցուցանիշ։ Մեր կարծիքով նպատակահարմար է մեքենաշինության առանձին ճյուղերում զուտ արտադրանքի աճն օգտագործել որպես ուղղակի ֆոնդակազմավորող ցուցա-

Աղյուսակ № 5

ՀՍՍՀ մի քանի արտադրական միավորումներում և «Ալմաստ» գործարանում արտադրանքի մեկ ուրլուն ընկնող աշխատանքի վարձատրման ծախսումները (կուպեններով)

Միավորումներ և «Ալմաստ» գործարան	Մեկ ուրլի արտադրանքին ընկնող աշխատավարձի ծախսումները					
	զուտ արտադրանքով			համախառն արտադրանքով		
	1977 թ.	1978 թ.	շեղում (+, -)	1977 թ.	1978 թ.	շեղում (+, -)
«Հայէլեկտրամեքենա»	66,4	63,0	-3,4	17,7	18,1	0,4
«Հայէլեկտրալույս»	44,0	41,5	-2,5	19,5	19,0	-0,5
«Հայէլեկտրաշարժիչ»	72,4	71,0	-1,4	27,0	26,4	-0,6
«Հայէլեկտրաապարատ»	48,4	46,9	-1,5	20,5	19,7	-0,8
«Անդրեկաբել»	46,7	44,4	-2,3	6,2	6,0	-0,2
«Ալմաստ»	33,7	30,2	-3,5	17,5	15,2	-1,3

նիշ, արտադրանքի մատակարարման պլանային առաջադրանքների կատարման հետ միասին։ Այս կապակցությամբ ուշադրության է արժանի 1973—1975 թթ. ընթացքում Կիրովականի ավտոգնային մեքենաշինության գործարանում նյութական խրախուսման ֆոնդի կազմավորման նպատակով նորմատիվային զուտ արտադրանքի օգտագործումը որպես ֆոնդակազմավորող ցուցանիշ։ Այստեղ նյութական խրախուսման ֆոնդի կազմավորման ժամանակ իրացված արտադրանքի աճի տեմպերի փոխարեն օգտագործվել է նորմատիվային զուտ արտադրանքի աճի ցուցանիշը։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված գործարանում իրացված և նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշների աճի տեմպերը չեն համընկնում։ Արտադրության պլանը նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշով 1973 թ. կատարվել է 101,7, 1974 թ.՝ 103,0, 1975 թ.՝ 100,5%-ով, իսկ իրացված արտադրանքով՝ համապատասխանաբար 102,0, 104,5 և 101,4%-ով, որի հետևանքով էլ շահույթից նյութական խրախուսման ֆոնդին կատարվող հատկացումների գումարները տարբեր են։ Այսպես, նորմատիվային զուտ արտադրանքի պլանային ցուցանիշների գերակատարման համար ձեռնարկության նյութական խրախուսման ֆոնդը 1973 թ. ավելացել է 6,8, 1974 թ.՝ 12 և 1975 թ.՝ 1,9 հազ. ուով, մինչդեռ, եթե ձեռնարկության տնտեսական գործունեությունը գնահատվեր իրացված արտադրանքի ծավալի ցուցանիշի միջոցով, ապա նյութական խրախուսման ֆոնդը 1973 թ. կա-

վեկանար 8, 1974 թ.՝ 18 և 1975 թ.՝ 5,6 հազ. ուով: Այսինքն՝ իրացված արտադրանքի ցուցանիշի օգտագործման պայմաններում ձեռնարկությունն առանց լրացուցիչ ջանքերի, միայն արտադրանքի նյութատարության բարձրացման հաշվին, կարող էր 1973 թ. ստանալ 1,2, 1974 թ.՝ 6 և 1975 թ.՝ 3,7 հազ. ու. չհիմնավորված պարզե: Այստեղից հետևում է, որ ղուտ արտադրանքի ցուցանիշն ափելի հիշտ է ղնահաստում արտադրական կոնկրետիվներին տնտեսական գործունեության արդյունքները:

Այսպիսով, կարելի է եղրակացնել, որ արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության պլանավորման, ղնահաստման և խթանման համար ղուտ արտադրանքի ցուցանիշի կիրառումը հնարավորություն է տալիս ափելի հիշտ ղուղակցելու հասարակության և կոնկրետիվ ջահերը, խնայողաբար օգտագործելու հղած ղնսուրսները, նպատակամղում է ժողովրդատնտեսական վերջնական արդյունքների ձեռքբերմանը:

Նորմատիվային ղուտ արտադրանքը կարող է օգտագործվել տնտեսական գործունեության ղնահաստման, արտադրության ծավալի, աշխատանքի արտադրողականության, ֆինղահատույցի, աշխատավարձի ֆունդի պլանավորման, աշխատանքի արտադրողականության և միջին աշխատավարձի աճի տնայերի հարաբերակցության սահմանման, տնտեսական խթանման կաղմակերպման նպատակներով: Ներկայումս նորմատիվային ղուտ արտադրանքի ցուցանիշը կիրառվում է Միության ափելի քան հաղար արդյունաբերական միավորումներում ու ձեռնարկություններում, իսկ մեր հանրապետությունում այսօրվա ղրությամբ միայն երկու արտադրական ձեռնարկություններում են աշխատանքներ կատարվում այս ուղղությամբ: Մինղեռ, հաղի առնելով վերոհիղյալը, անհրաժեշտ է կտրուկ միղցառումներ ձեռնարկել արտադրական միավորումներում և ձեռնարկություններում նորմատիվային ղուտ արտադրանքի ցուցանիշը մղակելու և ներղնելու համար:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ ПЛАНИРОВАНИЯ СТОИМОСТНЫХ ПОКАЗАТЕЛЕЙ ПРОМЫШЛЕННОЙ ПРОДУКЦИИ

РАДИК МИРЗОЯН, АКОП МАРУТЯН

Резюме

В постановлении ЦК КПСС и Совета Министров СССР от 12 июля 1979 г. «Об улучшении планирования и усилении воздействия хозяйственного механизма на повышение эффективности производства и качества работы» рассмотрены вопросы совершенствования стоимостных показателей промышленной продукции, используемых для планирования и оценки хозяйственной деятельности производственных объединений и предприятий. В этой связи особое внимание следует уделить чистой продукции как основному показателю планирования и оценки хозяйственной деятельности производственных объединений и предпри-

ятий, так как налицо преимущества показателя чистой продукции по сравнению с валовой, товарной и реализованной продукцией. Применение показателя чистой продукции позволяет правильно оценить результаты труда производственных коллективов, способствует расширению ассортимента и повышению качества продукции, более полному удовлетворению потребностей народного хозяйства и населения, правильному планированию производительности труда и фонда заработной платы.